**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 03 Մարտի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բադալյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը, Տ. Վարդանյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

**Հայտերի բացման վերաբերյալ**

Ջրային կոմիտեի կարիքների համար Շիրակի մարզի Վարդաքար համայնքի բետոնապատ հեղեղատարի և Նոր Կյանք համայնքի հեղեղատարի մաքրման և կարգավորման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի փետրվարի 20-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 12.02.2025թ.-ին):

**Հրավերում կատարված փոփոխություններ**

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Հիդրոէկ» ՍՊԸ կոնսորցիում | ք. Երևան, Արմենակյան 125/3<br>099 426236<br><br>ք. Երևան, Արմենակյան 125/3<br>093 001030 | jhhi@jhhi.am<br><br>tokmajyan.hovhannes@gmail.com |
| «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան-Առինջ, 1-ին միկրո. 1/7, 5 091 333032 | tender@bime.am |
| «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան-Առինջ 1-ին մկ2, շենք 2 բն 16<br>094 620516, 097 219852 | hharut3@yahoo.com |

## Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1**<br>**Գնման գին – 1 500 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>ՀՀ Շիրակի մարզի Վարդաքար համայնքի բետոնապատ հեղեղատարի և Նոր Կյանք համայնքի հեղեղատարի մաքրման և կարգավորման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություններ | | | | |
| 1 | «Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Հիդրոէկ» ՍՊԸ կոնսորցիում | 1 150 000 | 230 000 | 1 380 000 |
| 2 | «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ | 1 300 000 | 0 | 1 300 000 |
| 3 | «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ | 1 400 000 | 0 | 1 400 000 |

## Մասնակց(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի** հայտով չեն ներկայացվել՝ հրավերով պահանջվող «Պիտանելիության չափորոշիչ» որակավորման չափանիշով սահմանված՝ լիցենզիան (ներդիրը) բնօրինակից արտատպված, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված նմանատիպ պայմանագիրը (կամ պայմանագրերը) և դրանց պատշաճ ձևով իրականացված լինելու վերաբերյալ փաստաթղթերը, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանքը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն Հավելված N3-ի և կից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Մասնակից **«Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ի** հայտով չեն ներկայացվել հրավերով պահանջվող Հավելված 2.1-ը, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանքը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն Հավելված N3-ի և կից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Մասնակից **«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Հիդրոէկ» ՍՊԸ կոնսորցիումի** հայտով ներկայացված Դիմում հայտարարությունում (Հավելված 1) մրցույթը կազմակերպող մարմնի անվանումը սխալ է նշված: Հայտով ներկայացված կոնսորցիումի պայմանագիրը հաստատված (կնքված և ստորագրված) չէ Գործընկերների կողմից:

**Հանձնաժողովի որոշումը**

---

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ԳՀԽԾՁԲ-25/2-Ն ծածկագրով հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին, «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ին** և **«Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Հիդրոէկ» ՍՊԸ կոնսորցիումին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(04.03.2025թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ___ | Է. Բադալյան |
| անդամներ | ___ | Կ. Ալեյան |
| | ___ | Կ. Սարգսյան |
| | ___ | Տ. Վարդանյան |
| | ___ | Ս. Աբազյան |
| Քարտուղար | ___ | Ս. Գալստյան |